ցէ ոչ մի գաւառական քաղաքում այնքան չեն համակրում «Մշակ» լրագրին, որքան Բագուի մէջ։ Անհնարին է նկարագրել թէ որքան հետաքրքրութեամբ ձեր լրագրի համարները այստեղ ձեռքից ձեռք են անցնում, փոստը ստացած ժամանակ։ Առհասարակ Բագուն միշտ արձագանք է տալիս ամեն ազգօգուտ գործերին։ Ոչ ոք չէ մոռացել, ինչպէս Հայաստանի սովի ժամանակ, Բագուն հեռեցաւ «Մշակի» հրաւէրին, քան օրվայ մէջ ժողովեց 7000 բուբլ։ Գաւառացի ինտելիգէնցիան առհասարակ համակրում է «Մշակին», բայց մանաւանդ մեր քաղաքի երիտասարդները։ Բագուն կարելի է բացառութիւն համարել, առհասարակ, գաւառական քաղաքներում իր եռանդի կողմից։ Այստեղ կայ Մարդասիրական ընկերութիւն, գրադարան, երկսեռ դպրոց։ Հայ-աւետարանականներն էլ ունեն իրանց դպրոցը, որ մի և նոյն ժամանակ և նրանց ժողովարանն է։ Քաղաքիս փողոցները լայնացնելու և գեղեցկացնելու համար քաղաքային դուման մեծ գումարներ է ծախսում։ Նորերս սկսել են ծովի դէպի քաղաքն ընկած ափերի վրա մի քարաչէն պատ քաշել և նրա առջևի ճանապարհը ուղղել։ Պէտք է աւելացնեմ որ տեղիս հայ հասարակութեան ամենաեռանդոտ մասը կազմում են ոչ թէ բնիկ սակաւաթիւ հայերը, այլ օտարականները, մանաւանդ շուչեցիները և չամախեցիները։ Զարմանալի է որ չամախեցիները, որոնք այստեղ աշխատասէր և եռանդոտ են, իրանց հայրենի քաղաքում, Շամախում, ամենամեռած մարդիկ էին։»

—

Մեզ գրում են ԻԳԴԻՐԻՑ, որ այդտեղի հասարակութիւնը շատ դժգոհ է տեղական բժշկից։ Շատերը հիւանդներից կատարելապէս զուրկ են մնում բժշկի հոգացողութենից։ Բացի սորանից Իգդիրում դեղատուն (ապտէկա) չը կայ և դեղեր բերելու համար, պէտք է գնալ Երևան։ Թղթակիցը հարցնում է. մթթէ Սուրմալուի վիճակի հասարակութիւնը չէ կարող իր մէջ մի գումար հաւաքել և Իգդիրում հիմնել մի դեղատուն, ի հարկէ կառավարութենից այդ հիմնարկութեան համար թոյլատրութիւն խնդրելուց յետոյ։

—

ՂԱՐՍԻՑ մեզ գրում են որ սեպտեմբերի ընկզքներում այդտեղ հայոց ուսումնարանի աշակերտները մի թատրոնական ներկայացում տուեցին, որից շատ գոհ մնաց հասարակութիւնը և խնդրեց կրկնել։

—

Ղարսից մեզ գրում են. «Աչքի առաջ ունենալով այն, որ Ղարսի նման մի նոր զարգացող և ուսումնասէր տեղի համար խիստ մեծ կարևորութիւն ունի ազգային կրթութեան և լուսաւորութեան տարածումն, այդ պատճառով հրաւիրում ենք ազգային բարերարների և գործիչների ուշադրութիւնը Ղարսի երկսեռ չքաւոր դպրոցների վրա, այդ հաստատութիւններին կարողութեան չափ նիւթապէս օգնելու համար, որպէս զի նրանց գոյութիւնը ապահովվի։»

—

Հետաքրքիր է իմանալ ինչ է անում այն յանձնաժողովը, որ ընտրվել է Շաբուրովի և Քամոյեանց եկեղեցու գործը քննելու համար։ Կարծում ենք որ մի ամիս անցել է, իսկ յանձնաժողովը, որքան յիշում ենք, խոստացել էր ընտրվելուց մի ամսից յետոյ ներկայացնել եկեղեցու ծխականներին իր աշխատութիւնների եզրակացութիւնը։

—

Ստանում ենք գրեթէ ամեն օր բազմաթիւ տեղեկութիւններ Ներսիսեան դպրոցի վարչութեան, տեսչի, ուսուցիչների, վերակացուների և հոգաբարձուների գործունէութեան մասին։ Բայց ինչպէս մեր շատ ուրիշ ազգային հիմնարկութիւնների մասին, այնպէս էլ Ներսիսեան դպրոցի մասին կատարելապէս ապարդիւն ենք համարում մի որ և է բան գրելու։

—

Սեպտեմբերի վերջին օրերում ցրտերը յանկարծակի սկսվեցան Թիֆլիսում։

—

Մեզ պատմում են որ մինչև Մամբրէի Էջմիածնից Թիֆլիս վերադառնալը, իբրև նրա տեղապահ արդէն հասել է Թիֆլիս Սեդրակեան Արիստակէս վարդապետը։

—

Մեզ հաւատացնում են, որ Թիֆլիսի մէջ իր կացութեան կարճ ժամանակամիջոցում Մամբրէ վարդապետը կարողացել է դիզել 10.000 բուբլ գումարի մի կարողութիւն։

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Վիէննայի „Journal d'Orient" լրագրում կարդում ենք հետևեալ նամակը Կ. Պօլսից գրված։

Ես շատ ցաւում եմ որ ստիպված եմ ձեզ խոստովանվել թէ ամենաանմխիթար տպաւորութիւններին եմ ենթարկվել վերադառնալով այստեղ։ Մի կողմից անչափ մեծ և հակաքաղաքական խստութիւն է տիրում այստեղ թիւրքաց կառավարութեան կողմից հայերի վերաբերութեամբ. լրագիրները խափանվում են, թատրոնները փակվում են կառավարութեան հրամանով, միայն այն պատճառով որ գործողները այդ հիմնարկութիւնների մէջ հայեր են։ Արգելված է ներկայացումներ տալ հայոց լեզուով, արգելված են հայոց երգեցողութիւնները։ Հայաստանում կատարվում են ամեն տեսակ հալածանքներ և ճնշումներ նախագծված պլանով, աշխատում են սիստեմատիկաբար ջնջել հայոց ազգութիւնը,—և այդ ամենը կատարվում է որպէս զի այդ մակիաւելական միջոցներով չէզոքացնեն եւրոպական պետութիւնների դիտաւորութիւններն ու գործողութիւնը։ Հայերի այժմեան վիճակը աւելի թշուառ է, քան թէ Եւրոպայի միջամտելուց առաջ։ Պետութիւնները դժբաղդաբար բաւականաչափ համերաշխ չեն այդ խնդրի մէջ և պարզապէս տեսնում ենք արդէն որ պետութիւններից իւրաքանչիւրը հպատակվելով իր առանձնական շահին, պատրաստ է նորից զոհել հայոց ազգութեան վիճակը իր եսականութեան զգացմունքին։ Դուք պետութիւններից իւրաքանչիւրի գործելու և հայեացքի եղանակը ճանաչում էք արևելեան խնդրի վերաբերութեամբ։ Շատերը, կարծես, տրամադիր են նորից զոհ բերել Հայաստանը Թիւրքիայի բարեկամութիւնը ստանալու համար։

Թիւրքաց հայերը, շարունակում է թղթակիցը, տատանում են յուսահատութեան և առելութեան մէջ. նրանք հառաչում են քիւրդերի հարստահարութիւնների և թիւրք տեղական պաշտօնեաների անյագութեան տակ։ Հայերը տրամադիր են հաւատալ որ կենտրոնական վարչութիւնը իրան նպատակ է դրել գլխովին ոչնչացնել ազգը։ Սակայն այդ ազնիւ, աշխատասէր, խաղաղ և արդիւնաբերող ազգը արժանի է աւելի լաւ վիճակի։

Իր նամակի վերջում թղթակիցը իր համակրութիւն է յայտնում դէպի Վիէննայի ֆրանսիական թերթը և յայտնում է թէ ուղարկում է խմբագրութեանը նշանաւոր գօկումենտներ, որոնց միջոցով կը մերկացվին շատ ճշմարտութիւններ։

—

„НОВОЕ ВРЕМЯ" ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

„Новое Время" լրագրին Կ. Պօլսից գրում են սեպտեմբերի 3-ից։

Հայոց խնդիրը նորից առաջացնում են Լօրդ Դէօֆերինի եռանդոտ առաջարկութիւնների պատճառով Բ. Դրանը, Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի իրագործման մասին պետութիւնները նորից ստիպված են փորձել իրանց համերաշխութիւնը թիւրքերի յամառութեան դէմ ինչպէս յայտնի է յիշեալ յօդուածը ի նկատի ունի հայերի եթէ ոչ կատարեալ ազատութիւնը ասիական դարևոր լուծից, որ ծանրացել է և ծանրանում է նրանց վրա, գոնեա նրանց վիճակի բարւոքումը։ Ճշմարիտ, հայերի վիճակը վատ է և մանաւանդ խղճալի է, որովհետև Եւրոպան առանձին ուշադրութիւն չէ դարձրել նրանց վրա և ցաւակցութիւն չէ յայտնել դէպի նրանց վիճակը։ Բերլինի կոնգրեսի ժամանակն էլ քիչ էր մնում մոռանային հայերին և միայն վերջին րոպէներում նրանց յիշեցին Բ. Դունից ճ նշված ազգութիւնների հոգաբարձու քաղաքագէտները։ Այդ իրողութիւնը մեկնվում է այն հանգամանքով, որ թիւրքահպատակ բոլոր քրիստոնեայ ազգերից հայերը հեռացած են Ասիայի խորքերը, հետևապէս նրանց դրութիւնը այնքան չէ կարող ենթարկվել Եւրոպայի հսկողութեանը, որքան միւս ազգութիւնների վիճակը։ Յարմար հաղորդակցութիւններից զուրկ, հասարակական կեանքի ամենատարրական պահանջների վերաբերութեամբ անապահով թիւրքաց Հայաստանը ընդարձակ ասպարէզ է ներկայացրել թիւրքաց կամայականութեան գործադրութեան համար, իսկ թիւրք ասիճանաւորներն էլ իրանց բարբարոսութեան մէջ քիւրդերին օգնականներն են դարձրել։ Հայերը, ինչպէս ասում են, ստիպված են երկու կրակի մէջ ապրել. մի կողմից թիւրքը առնում է նրանցից ամեն տեսակ հարկեր, միւս կողմից քիւրդը կողոպտում է այն բոլորը, ինչ որ մնում է օրինական և սիստեմատիկաբար կատարված բռնութիւններից յետոյ։ Երեք տարիներ անցել են այն ժամանակից, ինչ հայերի համար յուսոյ ճառագայթ երևաց, որ պետութիւնները վերջապէս նրանց ձեռք կը մեկնեն, Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի հիման վրա խոստանալով նրանց վիճակը բարւոքող վերանորոգութիւններ։ Այդ ժամանակամիջոցի ընթացքում Բ. Դուռը միջոց ունէր իր հպատակ հայերի հետ հաշտվելու համար։ Բայց իսկապէս ի՞նչ պատահեց։

Այս հարցի վերաբերութեամբ բողոքող պետութիւնները լռում էին թիւրքաց կառավարութեան պարտականութիւնների մասին, իսկ Կ. Պօլսի մէջ այդ պարտականութիւնները կատարելու համար աւելի լաւ միջոց չը գտան, քան թէ հայերի վիճակի վատթարացնելը։ Իր սովորութեան համեմատ Բ. Դուռը հայոց հարցը հեշտացնելու տեղ կարողացաւ աւելի էլ նրան խրճճել և նախկին դժուարութիւններին նորերը աւելացնել։ Այդպիսի դժուարութիւններից մէկը Սիսի հայոց կաթողիկոսի յանկարծակի նշանակելն էր, որ այս անգամ կատարվեցաւ առանց Էջմիածնի կաթողիկոսի համաձայնութեան, որ հայ եկեղեցական իերարխիայի ամենաբարձր տեղն է։

Այդպիսի գործը կարող է շատ փոքրացնել պետութիւնների առանց այդ էլ անհաստատ յոյսերը Հայաստանի մէջ վերանորոգութիւնների իրագործման մասին։ Դժուար է հասկանալ, թէ ի՞նչի Բ. Դուռը այդ կողմից աւելացնում է դժուարութիւնների թիւը։ Եթէ հայերի եկեղեցական հարցերը թիւրքիայի ներքին քաղաքականութեան առարկայ են կազմում, ուրեմն պէտք չէ մոռանալ, որ բոլոր հայերի կաթողիկոսը, „հայոց պապը" ապրում է Էջմիածնի մէջ, այսինքն ռուսաց հողի վրա։ Այսպիսով Բ. Դրան վերոյիշեալ կարգադրութենից երևում է, որ նա ոչնչացնում է կամ անուշադիր է թողնում ռուսահպատակ հայերի եկեղեցական միութիւնը միւս հայերի հետ։

Բ. Դուռը, այդպիսի գործ կատարելով, ակներև է, որ լաւ չէ հասկանում նրա մեծ նշանակութիւնը։ Էջմիածինը հայ-լուսաւորչականների համար միշտ կենտրոնատեղի է եղել, ունենալով նրանց աչքում պապական հռչամի նշանակութիւնը, նա միշտ հայ ազգաների աղօթատեղի և հայ բխտաւորների գումարման տեղ է եղել։ Կաթողիկոսը միշտ ապրել է իր վանքի մէջ և արևելեան այլ պետերի նման անսահման իշխանութիւն է ունեցել իր հպատակների վրա։ Նրան տուած այցելութիւնները միշտ փառաւոր են եղել և նրանց ժամանակ հպատակութիւն և հնազանդութիւն է յայտնվել։ Մինչև այժմ Էջմիածինը հայերի եկեղեցական և քաղաքական կենտրոնատեղի է եղել և Էջմիածնի վրա իշխանութիւն ունեցող կաթողիկոսը ունեցել է իսկական իշխանութիւն բոլոր հայերի վրա և ամբողջ Հայաստանի քաղաքական համակրութիւնն է վայելել։ Ինչպէս երևում է, Բ. Դուռը չը գիտէ կամ չէ կամենում այդ բանն իմանալ։ Նա քիւրդերին գրգռում է հայերի դէմ, գիտում է կեղծ շրջաբերականների վերանորոգութիւնների խոստմունքներով, որոնք թղթի վրա էլ տեղ չեն ունեցել, և այդպիսով իր իշխանութիւնը Հայաստանի մէջ ապահով է համարում։ Բայց ներնօգօրիական և յունական խնդիրները ցոյց տուին, թէ Եւրոպան մինչև ո՞ր աստիճան կարող է հաւատալ սուլթանի խոստումներին, իսկ հայոց կաթողիկոսի նշանակելը պէտք է համոզէ պետութիւններին, որ անկարելի է յուսալ Բ. Դրան կամքի և պատրաստականութեան վրա Բերլինի դաշնագիրը իրագործելու մասին հայերի վերաբերեալ։ Միւս կողմից հայկական խնդրի վերաբերութեամբ գեսպանների մէջ կատարվող բանակցութիւնները, որոնց սկզբնապատճառ դարձել են անգլիական և ռուսաց դեսպանները, շատ չեն կարող անհանգստացնել Բ. Դրանը։ Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների հարցը ներնօգօրիական և յունական սահմանները ուղղելու հարցերի չափ նշանաւոր չէ։ Որքան վերջինները կարող էին խանգարել Եւրոպական խաղաղութիւնը, հետևապէս հետաքրքիր էին Եւրոպական պետութիւնների համար, նոյնքան հայոց խնդրի լուծման մէջ շատ քիչ են հետաքրքրված նոյն կառավարութիւնները։ Այսպիսով Եւրոպայի ձնշումը Բ. Դրան վրա հայկական հարցի վերաբերութեամբ նոյն բնաւորութիւնը չի ունենայ, ինչ որ ունէր ներնօգօրիական և յունական խնդիրների վերաբերութեամբ։ Այս անգամ նախագծված է ազդել թիւրքաց կառավարութեան վրա ոչ թէ սպառնալիքներով և ուղղակի ճնշում գործելով, այլ համոզմունքի ոյժով։ Գոնեա պետութիւնների ներկայացուցիչները նորերումս հաւաքվեցան ռուսաց դեսպանի մօտ և կազմեցին այն գլխաւոր վերանորոգութիւնների նախագիծը, որոնք հարկաւոր են փոքր-Ասիային և հայերով բնակեցրած նահանգներին։ Դեսպանները մտադիր են այդ նախագիծը ներկայացնել Բ. Դրանը և առաջարկել նրա իրագործումը այն դէպքում, եթէ ինքը թիւրքաց կառավարութիւնը ոչինչ չի անի հայկական խնդիրը լուծելու համար։ Պետութիւնների ներկայացուցիչներից իւրաքանչիւրը այդ առիթով տեսնվել է Ասիա-փաշայի հետ, որին առաջարկված է ուղարկել Հայաստան արքունական մի գործակատար և նրան ընդարձակ իրաւունքներ տալ անընդունակ վարչական անձանց փոփոխելու և նրանց զեղծումները ուղղելու համար։ Արտաքին գործերի մինիստրը շտապեց հաւատացնել միջնորդներին, որ ամեն բան կը կատարվի։ Բայց Լօրդ Դէօֆերին չը բաւականացաւ այդպիսի խոստումով։ Նա տեսութիւն ունեցաւ սուլթանի հետ, որին առաջարկեց նոյնը, ինչ որ Ասիա-փաշային և,

օգուտ քաղելով այդ դէպքից, ծանօթացրեց սուլթանին Հայաստանի մէջ մացնելի վերանորոգութիւնների նախագծի հետ։ Դիպլոմատիական շրջաններում հաւատացած են, որ այդ առաջին փորձը Բ. Դրան վրա „համոզման ուժով“ ներգործելու համար, աջողութիւն կունենայ և որ սուլթանը շուտով կուղարկի Հայաստան յիշեալ գործակատարին։ Ակներև է, որ սուլթանի համար դա միակ ելք է, քանի որ դեսպանները յամառութեամբ պաշտպանում են հայկական խնդիրը։ Բայց արդեօք այդ գործն էլ օգտակար չի՞ լինի Թիւրքիայի համար, արդեօք Բ. Դուռը օգուտ չի՞ քաղի այդ դէպքից ժամանակ վաստակելու համար։

ԱՆԳԼԻԱ

Գարֆիլդի յիշատակը յարգելու համար Լօնդօնի մէջ հոգեհանդիսա կատարվեցաւ, որին ներկայ էին մօտ 2000 մարդիկ։ Ժողովը սկսվեցաւ մի հոգևորականի կարդացած աղօթքով, որի վերջանալուց յետոյ ամերիկական դեսպան Լօուելլ մի երկար ճառով նկարագրեց Գարֆիլդի կենսագրութիւնը և հայրենիքին մատուցած նրա անձնական ծառայութիւնները։ Հանգուցեալի անձնական բարձր յատկութիւնները թուելուց յետոյ դեսպանը շնորհակալութիւն յայտնեց անգլիական ժողովրդին և թագուհուն, որոնք ցաւակցութիւն յայտնեցին ամերիկական ժողովրդի վշտին, որ բաժանում են բոլոր դասակարգերի ամերիկացիները։ Միացեալ Նահանգների նոր նախագահի մասին դեսպանը ասաց, որ անքաղաքավարի է համարում քննադատել նրա բնաւորութիւնը։ Մի քանի ուրիշ ճառերից յետոյ ժողովը վճիռ կայացրեց ցաւակցութիւն յայտնել հանգուցեալ Գարֆիլդի ընտանիքին։

Սեպտեմբերի 26-ին Գարնէլ վերադարձաւ Դուբլին։ Զը նայելով, որ նա շատ ուշացաւ, այնու ամենայնիւ երկաթուղու կայարանի մօտ հաւաքվել էին մօտ 20,000 մարդիկ, որոնք իրանց հետ ունէին երաժշտութիւն, վառած ջահեր և որոնք ոգևորութեամբ ընդունեցին կալուածական միութեան առաջնորդին։ Ամբոխը նրան ուղեկցեց մինչև կալուածական ժողովի գումարման տեղը, ուր նրան մի ուղերձ ներկայացրին։ Այդ ուղերձին Գարնել պատասխանեց մի ճառով, որի մէջ ի միջի այլոց նկատեց, որ Իրլանդիայի համար անհրաժեշտ է օրէնսդրական անկախութիւնը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 14 սեպտեմբեր

Այստեղի հայ սոֆտաները, որ ասվում է ինտելլիգենցիա, դարձեալ առնում են նամակիս նիւթ, մանաւանդ որ Թիֆլիսի մի քանի պարզամիտներ զարմանքով ասում են. «Ինչ ժամանակ է հիմայ անտեսական կամ ուրիշ հարցերով զբաղվել, երբ ամենից գլխաւորը հայոց հարցն է, որով և եթէ հարկաւոր է պարապվիլ»։ Ի հարկէ այդ մի այնպիսի նորութիւն չէ, որը արժան լինէր նաև լրագրի մէջ տպել, բայց ասեցէք խնդրեմ միթէ ուրիշ ներքին հարցերով զբաղվողները հէնց մի բոպէ մոռանում են և հայոց հարցի մասին. իսկ գիշեր ցերեկ հայոց հարցի վրա միայն խօսելը արդեօք շաղակրատ պառաւի գործ չէ՞ լինի. երբ մեր այս խնդիրը տարիներով առկախ մնալով միայն այս քանի օրերս երևան եկաւ, այն էլ դարձեալ մեր բաղդից ընդմիջվելով առ այժմ եգիպտական անցքերով։ Այսպիսի հանգամանքների առաջ կանգնած լինելով հարկաւոր չէր արդեօք մի օր առաջ սկսել մտածել մեր ներքին գործերի վրա ևս, ինչպէս Միացեալ կամ միւս ընկերութեանց գործն է։ Բայց դիցուք թէ հիմայ, այս բոպէիս հարկաւոր է յիրաւի միայն և եթէ, գիշեր և ցերեկ հայոց խնդրի վրա խօսել, բայց թող ներվի մեզ հարցնել այդպէս խօսողներից, թէ ինչ բան են անում նոքա արդեօք իրանց դարդակախօսութիւններով։ Եթէ հայոց խնդրի սիրահար պառուզներից են այսպիսիները, թող նոքա իրանք առաջինը մտածէին գոնէ այնպիսի գործնական նպատակների վրա, ինչպէս Եւրօպայում հայոց օրգան ունենալու կարևորութիւնն է, ինչպէս օտար լրագիրների մէջ հայոց համար պրօպագանդա անելն է, ինչպէս թղթակիցներ դէս ու դէն ուղարկելու հարցն է, ինչպէս արդէն հիմնված օրգանին Վիէննայի մէջ օգնութիւն հասցնելու անհրաժեշտութիւնն է, ինչպէս այդ լրագրին յօդուածներ և նիւթ ուղարկելու կարիքն է, և այլն և այլն։

Մինչդեռ ոչ մէկը այս ամենից չանելով, այլ բոլոր ժամանակ պարապելով միայն զանազան անձնական և մասնաւոր խծբծանքներով, զանազան թատրոնական ինտրիգներով, վեր են կացել այժմ քարոզ են կարդում թէ՝ հայոց հարցով է հարկաւոր պարապվիլ. այո, հայոց հարցով պէտք է պարապված, բայց ոչ լոկ դարդակ խօսելով. վասնորոյ եթէ միայն լրագիրը լցնելու համար չեն հրատարակում նորան, այլ գործ յառաջացնելու համար, թող ուրեմն մի օր առաջ գործնական բաների ետևից ընկնեն, այլ ոչ թէ այստեղի հայ սոֆտաների պէս դարդակաքանութիւններով ժամանակ անցնեն։

A propos ասեմ մի լաւ ապացոյց թէ որչափ անպիտան և վնասակար արդիւնք են արտադրում ճարտար կերպով լրագիրների և դանլիճների մէջ հայրենասիրական վարդապետութիւններ անողները՝ «Journal d'Oriant-ի» երևան գալու օրից ի վեր Կ. Պօլսի մէջ միայն երեք բաժանորդ գտնվեցաւ, մինչդեռ քանի երեք հազար անգամ երեք մարդիկ կարելի է տեսնել այստեղ, որոնցից իւրաքանչիւրը «հայոց հարց», «ախ հայոց հարց» է աղաղակում. յայտնի պառառասիսոսող մի խմբագրութեան նման։ Ահա այդպէս են օգնում հայոց հարցի յառաջադիմութեան և Սօսիւնի ընկերակից Դիոգէնէսները և Եղիա մարգարէները։

Պ. Մինաս Չերազի հետ արդէն խօսեցինք, որ այսուհետև մի անգամ ընդ միշտ կանոն դրվի, իւրաքանչիւր չորս ամիսը մէկ, լրագրական միջոցով դրամական և ուրիշ ներքին կարգադրութեանց բոլոր հաշիւները ազգին ներկայացնելու։ Տեսնենք թէ ընդհանուր ժողովի անդամներն էլ կը համաձայնվեն դրա հետ։ Զը նայելով որ կան մի քանի յետադէմ անձինք այդ ժողովի մէջ, բայց յուսանք, որ Միացեալ ընկերութիւնը ընդունակ կը լինի մի ճշմարիտ և իստակ գործ կատարելու, քանի որ ճանաչում ենք նոր անօրէն ժողովի բարիացակամութիւնը և լաւ տրամադրութիւնը։

Բայց թող Թիֆլիսի սոֆտաները մի անգամ ընդ միշտ հաշվեն, որ նոքա չեն ընդունակ ոչ միայն հայոց խնդրի վերաբերմամբ մի իրական միտք յայտնել, մի նոր ինիցիատիվ ունենալ, այլ արքայութիւն գնալու գործի մէջ անգամ նոքա պիտի միշտ լինեն նոյն նախանձից խրծբծողները, նոյն բթամիտ «հեռատեսները», կոյր «տրատեսները» և սահմանափակ «ազգասէրները», ինչպէս եղել են դոքա մինչև հիմայ ևս և կը մնան իրանց յետնորդների մէջ մինչև աշխարհի վերջը, մինչև նոր ջրհեղեղը։ Մարդի դանդը, ուղեղը, բարոյականութիւնը փոխելը հեշտ բան չէ, դորա համար որչափ ժամանակ և ինչեր են հարկաւոր. որչափ բան է հարկաւոր հասկացնելու համար Կ. Պօլսի «պուբլիցիստներին» ևս թէ լրագրութիւնը մի այսպիսի ժամանակ, ազգի վերածնութեան հէնց սկզբումը կաշառ առնելու և պատիւ վաճառելու տապարկղ չը պիտի լինի. բայց ինչ, միթէ սոքա բան կը հասկանան, միթէ սոքա կուզղվեն. երէկ չէր միայն արդեօք որ Թէրջիմէնի Լֆքեաբ ասվող լրագրի խմբագիրը հրապարակապէս յայտնեց թէ Մասիսի աշխատակից Բիւզանդ Քէչէեան իր խմբագրութիւնը մտնելով մէկ ոսկի փող է գողացել, որի պատճառաւ Մասիսն էլ երկու օր է որ արդարացման յօդուածներով է զբաղեցնում հասարակութիւնը։ Խեղճ ժողովուրդը յուսահատ կերպով հարիւր կողմից ճիչ է բարձրացնում ասելով. «համեմ, միթէ մեր ազգային ցաւերը Մասիսի գողութիւնն կամ Թէրջիմէնի թերած փաստաբանական ապացոյցներ են», բայց ում վրա կարող է ազդել ժողովրդի թշուառ և անտէր վիճակը. այսօր միմեանց հարկաւոր է գովել, գոռալ «գող», «սրիկայ» կասեն, վաղը միմեանց հետ մի քանի մէջիդով հաշտվելով, կը սկսեն միմեանց գովել և «մեծդ», «անմահդ», «աքանչելիդ» ու «հանճարդ» ասել։ Ահա այնչափ է ընկած Կ. Պօլսի մէջ հայ հրապարակախօսութիւնը, այս կէտն է հասել այստեղի ինտելիգենցիայի բարոյական և մտաւորական դրութիւնը. դեհ եկէք ու ուժ ունեցէք ձեզ զսպել ու սոցա հետ քաղցր խօսել....

Ահա ձեզ մի նոր ապացոյց այստեղի լրագրութեան և ինտելլիգենցիայի մէջ բոլորովին ազգային անկեղծ զգացմունք չը լինելուն. ամբողջ մի շաբաթ է, որ Խարբերդի Վիլայէթում սոսկալի հեղեղներից գրեթէ հիմքից կործանվել է Ակն հայաբնակ քաղաքը իր բազմաթիւ հայ գիւղերով. հեղեղի մէջ անյայտացածների թիւը հաշվում են մօտ երեք հարիւր հոգի. էլ չեմ խօսում այն միլլիոնաւոր ոսկի վնասի մասին, որ հասել է խեղճ ջրատարների ունեցածներին։ Այս մասին ոչ մի հրաւէր, ոչ մի շարժում ազգային ժողովի և այստեղի եօթը հայ լրագիրների կողմից. ինչպէս էք գտնում այս։ Հայաստանը թող հարիւր անգամ կործանվի, սոցա ինչ, սոցա համար հերիք է, որ միմեանց ազգասէր ասեն և լրագիրների մէջ միմեանց գովեն Սօսիւնի նմանները։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից լրագիրներին հաղորդում են, որ պետութիւնները հրամայել են Կ. Պօլսի իրանց դեսպաններին որոշել այն հարկի գումարը, որ Բոլգարիան պարտաւոր է վճարել Թիւրքիային։ Միայն ռուսաց կառավարութիւնը, եթէ հաւատանք անգլիական լրագրների խօսքերին, ոչ մի հրաման չէ ուղարկել այդ բանի մասին պ. Նելիդովին։

—«Polit. Corresp.» լրագրին գրում են, որ դիպլոմատիական շրջաններում ծանր կերպով քննվում է սպանիական զօրքերով Եգիպտոսը գրաւելու նախագիծը։ Ֆրանսիական, անգլիական կամ Թիւրքաց զօրքերի մասնակցութիւնը նշանաւոր արգելքների կարող էր պատճառել։ Այն ինչ Սպանիան այդ դէպքում կը գործէր, որպէս Թիւրքիայի անկեղծ դաշնակից, և միջնորդ դատաւորի դերը կարող էր խաղալ Արևելեան հարցի մէջ։ Այդ առիթով Լօնդօնի «Daily Teleg.» լրագիրը նկատում է. «Այդ միտքը Մադրիդում չէ ծնվել։ Երիտասարդ թագաւորը և նրա կաբինէտը, որոնք ընդհանուր յարգանք են վայելում իրանց զգոյշ արտաքին քաղաքականութեան պատճառով, չեն կարող չը գիտենալ, որ Անգլիայի կողմից վճռողական բողոք կը բարձրանար Եգիպտոսը սպանիացիներով գրաւելու դէմ։»

—Փարիզից լրագիրներին հեռագրում են, սեպտեմբերի 20-ից, որ յեղափոխական յանձնաժողովների մասնաւոր ժողովը, աչքի առաջ ունենալով Տունիսի գործերի դրութիւնը, վճռեց մէկ բազմամարդ ժողով հրաւիրել մինիստրութեանը դատի ենթարկելու հարցը վճռելու համար։ Այստեղի Թիւրքաց դեսպանութիւնը պաշտօնապէս հերքում է «Gaulois» լրագրի հրատարակած լուրը Մէկկայում պատահած ապստամբութեան մասին։

—Գերմանական լրագիրները հաղորդում են, որ պրոֆէսոր Ադոլֆ Վագնէր ընտրողների բազմամարդ ժողովի մէջ մէկ ճառ ասաց, և ի միջի այլոց յիշեց, որ մանր բաների ետևից ընկնելը միայն կարող է դրդել մեզ ընդդիմադրել կառավարութեան մեծ գաղափարներին, որի միակ ներպատակն է Գերմանիան, թէ դուրսը և թէ ներսը զօրեղ դարձնել։ Յետոյ ճառախօսը յայտնեց, որ ինքն կաթոլիկ եկեղեցու հետ եղած կռիվը վերջացնելու կողմը կը լինի և ձայն չի տայ հրէաների դէմ եղող բացառական օրէնքներին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս Պետերբուրգ հասաւ մէկ ամերիկացի հարուստ մարդ, Մակէյ անունով, որը 600 միլիոն դոլլար կարողութիւն ունի, բայց չը նայելով իր բոլոր հարստութեանը, ամենաթշուառ մարդն է աշխարհումս։ Նրա անթիւ հարստութիւնները այնպիսի բացառական դրութեան մէջ են դնում նրան, որ միայն ծածկված և գաղտնի կերպով կարող է ապրել։ Նա ստիպված է միշտ ծպտեալ կերպով ճանապարհորդել։ Ոչ մէկ հիւրանոցի տէր չը գիտէ նրա իսկական անունը. նա երբէք չէ դիմում իր տէրութեան դեսպանութեանը կամ հիւպատոսութեանը և նրա բանկիրները պարտաւորված են գաղտնի պահել նրա ներկայութիւնը։ Նա ստիպված է այդ միջոցներին դիմել, եթէ ոչ նա մի բոպէ հանգիստ չէ կարող ունենալ. բոլոր թշուառները նրա օգնութեանն են ապաստում, գիւտ անողները աշխատում են հետաքրքրել նրան իրանց գիւտով, բարեգործական հիմնարկութիւնները ուղարկում են նրան իրանց ստորագրութեան թերթերը զոհաբերութեան համար։ Ոչ մի տեղ և երբէք նա հանգիստ չունի։ Ամենքը պաշարում են նրան խնդիրքներով։ Մի և նոյն ժամանակ Մակէյ բարի մարդ է և չէ սիրում որ իր արած բարեգործութիւնները հրատարակվեն։ Նա այժմ 45 տարեկան է, ազգով իրլանդացի է և կաթոլիկ կրօնին է պատկանում։ Ս. Պետրոսի ժապաւէնը կարող է նրա առաստաձեռնութեան վրայ լինել։ Քսան տարի առաջ նա ուղևորվեցաւ հեռու արևելքը բաղդ որոնելու և միլիոնէր դարձաւ, բայց այժմ սկսում է համոզվել, որ Կրէսոս լինելն ևս ունի իր մութ կողմերը։

* * *

Լօնդօնի բժշկական «Lancet» լրագիրը գրում է, որ իրան յաջողվեցաւ աշխարհիս ամենածեր մարդու հետ ծանօթանալ. դա Միքայէլ Սօլիս անունով մէկն է, որը Սալվատորում է ապրում։ Նա իրան 180 տարեկան է համարում, իսկ հարևանները պնդում են, որ նա աւելի ծեր է, որովհետև քաղաքի ամենածեր բնակիչները յիշում են իրանց հայրերի և պապերի պատմածներից, որ նրանց երիտասարդութեան ժամանակ Սօլիս արդէն ծեր մարդ էր։ Նրա ստորագրութիւնը 1712 թուից գտնվեցաւ ուրիշների թուում, որոնք մէկ վանք հիմնելուն մասնակից էին եղել։ Ներկայ ժամանակում ծերունու դէմքը դեղնագոյն է և նման է մագաղաթին. մազերը ձիւնի նման սպիտակ են։ Նա իր կեանքի երկարաութիւնը բացատրում է իր կանոնաւոր և չափաւոր կեանքով։ Նա օրը միայն մէկ անգամ է ուտում. իւրաքանչիւր ամսվայ մէկին և տասն և հնգին խիստ ծոմ է պահում. խմում է միայն անդգարար բաներ և երբէք տաք կերակուր չէ ընդունում։ Նրա կարծիքով, բնութիւնը միշտ տաքը բան է պահանջում։

* *

Բերլինի թատրոնական կեանքում մեծ աղմուկ բարձրացրեց նորերումս «Der Berliner Courier» լրագրի հետ պատահած սկանդալը։ Բանը նրանում է, որ գերմանական թերթը քամբասեց երիտասարդ և հասարակութեան սիրելի դերասանուհուն, տիկին Լիլի Լէմանին։ Վիրաւորված աղջիկը բաւականութիւն գտաւ մէկ անսովոր և վճռողական միջոցով. գնալով խմբագրութիւնը, նա, լրագրի բոլոր աշխատակիցների ներկայութեամբ, ապտակ տուեց պ. Թօբէրտ Դաւիդսոնին, վիրաւորիչ յօդուածի հեղինակին և հրատարակչին։ Տիկին Լէմանին ուղեկցում էր կայսերական թատրոնի արտիստ Շտոկհաուզէն։ Պ. Դաւիդսոն նրան մենամարտի հրաւիրեց, բայց Շտոկհաուզէն չը համաձայնվեց մենամարտել նրա հետ, պատճառ բերելով, որ պ. Դաւիդսոն առաջին անգամ չէ, որ այդպիսի վիրաւորանք է կրում, և հաստատեց իր խօսքերը անհերքելի ապացոյցներով։ Ցեմնելով Բերլինի հասարակութեան ընդհանուր զայրոյթը, քամբասող ժուրնալիստը ստիպված էր փախչել քաղաքից և դադարեցնել իր հրատարակութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 սեպտեմբերի։ Շաբաթ օրվայ երեկոյեան նիստի ժամանակ խմիչքների խանութների թիւը քչացնելու մասին խորհրդակցութիւնները չը վերջացան։ Այստեղի բանկերը և բանկային տները վճռել են ներքին նոր փոխառութեանը ստորագրվել 66 միլիոն ռուբլի։ Պօրեգանօացեվի Վարչավա գնալու պատճառը վերաբերում են ցանկութեանը ծանօթանալ նախկին ունիատների դրութեան հետ, որոնք միացել են ուղղափառ եկեղեցու հետ։ Երեխաներին հովանաւորելու ընկերութեան նախագիծը քննվում է ներքին գործերի մինիստրութեան մէջ։ Սեպտեմբերի 24-ին համալսարանին կից բացված է ուսանողական ընթերցարան։

խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ